# Language Style Guide (Eastern Armenian)
# Լեզվական թարգմանական չափանիշների ուղեցույց

## Introduction

Access to timely and relevant information is important to everyone, especially during emergencies. Effective alerts and warnings are those that result in members of the public taking recommended actions to protect themselves. To ensure that messages are effective when delivered to the whole community, it is critical to include multiple languages and formats. This information needs to be understood, consumable, and actionable by all Californians, including the estimated 7 million for whom English is not their primary language.

To address this issue, the California Governor's Office of Emergency Services (Cal OES) has created this Language Style Guide to assist alerting authorities. The Guide is a key resource in the issuance of multilingual emergency notifications in a manner reflective of the key linguistic features of the source emergency notifications templates. This style guide is intended to be used in conjunction with the Wireless Emergency Alert Library of translated Emergency Notification Language Templates available on the CalAlert.org website.

Nothing in this guide is intended to conflict with, or supersede, any existing arrangement for dissemination of public alerts and warnings by local, state, or federal agencies.

## Ներածություն

Տեղին և պատեհաժամ տեղեկույթի հասանելիությունը կարևոր է բոլորի համար, հատկապես արտակարգ իրավիճակների ժամանակ: Տագնապի ազդանշաններն ու նախազգուշացումներն արդյունավետ են, երբ դրանց շնորհիվ հասարակության անդամներն օգտվում են իրենց խորհուրդ տրվող միջոցառումներից իրենց պաշտպանելու համար: Հավաստիանալու համար, որ ամբողջ հանրությանը հասցվող հաղորդագրություններն արդյունավետ են, կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, որ դրանք իրացվեն բազմաթիվ լեզուներով և ձևաչափերով: Այս տեղեկությունը պետք է հասկանալի, իրագործելի և կիրառելի լինի բոլոր կալիֆորնիացիների, ներառյալ այն մոտ 7 միլիոն բնակչության համար, որոնց հիմնական լեզուն անգլերենը չէ:

Այս հարցը լուծելու համար Կալիֆորնիայի Արտակարգ իրավիճակների ծառայությունների նահանգապետի գրասենյակը (Cal OES) մշակել է այս Լեզվական ուղեցույցը տագնապի հայտարարման պատասխանատու մարմիններին օժանդակելու նպատակով: Ուղեցույցը կարևոր ռեսուրս է արտակարգ իրավիճակների վերաբերյալ բազմալեզու ծանուցումների տրամադրման հարցում այն առումով, որ արտացոլում է աղբյուրում ներառված արտակարգ իրավիճակների վերաբերյալ ծանուցումների ձևանմուշների հիմնական լեզվական առանձնահատկությունները: Այս չափանիշների ուղեցույցը նախատեսված է օգտագործելու CalAlert.org կայքում հասանելի Արտակարգ իրավիճակների մասին ծանուցման լեզվի թարգմանված ձևանմուշների Արտակարգ իրավիճակների ահազանգման անլար գրադարանի հետ համատեղ:

Սույն ուղեցույցով բնավ նախատեսված չէ հակասելու կամ փոխարինելու տեղական, նահանգային կամ դաշնային գործակալությունների կողմից հանրությանը հասցվող ահազանգերի և նախազգուշացումների տարածման որևէ առկա կարգի:

## Background

Emergency notifications must be accessible to, and understandable by, diverse populations to effectively relay information regarding threats or hazards. Messaging should be clear, consistent, and linguistically appropriate.

The state of California is comprised of many diverse communities, some of which include individuals with Limited English Proficiency. Identifying the most commonly used languages and having a process in place to translate warning messages, will ensure the greatest number of individuals understand the warnings being sent. It is important, however, to not let the inability to translate a message delay notification when time is of the essence and lives are at risk.

California Code of Regulations §8594.16 specifies that emergency notifications issued to the public shall be translated into two of the most commonly spoken languages other than English in any impacted county or counties.

Written correspondence is typically more formal than verbal communication. Therefore, certain considerations are called for when communicating in languages other than English. For example, when utilizing translation services, it is preferable to contract with local translators. There are multiple world language interpreting and translation service providers.

Jurisdictions should identify a world language service providers and establish contracts for services prior to any disaster to ensure timely and effective communication during events. Language service contracts should be available 24/7 to bridge any communication gaps quickly, efficiently, and in an attentive manner during steady state and in times of crisis.

Jurisdictions should be aware that written English and target languages present differently due to certain basic concepts for writing. Examples include:

- Use of capital letters in headlines,
- Use of capital letters in general (languages have different grammar rules),
- Some punctuation marks that have different usages (colon, dash, etc.),
- References to seasonal conditions in the source (for example, "Last summer, the agency..." considering “summer" resonates to a different time of the year for certain cultures.)
- Names of agencies, including acronyms, should remain untranslated and include a description of the service provided, as needed.
- In some cases, there is no equivalent term. In this case, provide the original name and an appropriate equivalent in parenthesis.

## Ընդհանուր դրույթներ

Արտակարգ իրավիճակների մասին ծանուցումները պետք է լինեն հասանելի և հասկանալի բազմատիպ բնակչության համար, որպեսզի արդյունավետ կերպով հաղորդեն սպառնալիքների կամ վտանգների մասին տեղեկությունները: Հաղորդման գործընթացը պետք է լինի հստակ, հետևողական և լեզվական առումով համապատասխան:

Կալիֆորնիա նահանգում բնակվում են բազմաթիվ տարատեսակ հանրույթներ, ընդսմին նրանց թվում կան այնպիսիք, որոնց մեջ կլինեն Անգլերենի սահմանափակ իմացությամբ անհատներ: Ամենատարածված կիրառում ունեցող լեզուների որոշարկումը և նախազգուշացնող հաղորդագրությունների թարգմանության գործընթացի պատշաճ իրականացումը կերաշխավորի, որ առավելագույնս մեծ թվով անհատներ կհասկանան ուղարկվող նախազգուշացումները: Այդուհանդերձ, կարևոր է թույլ չտալ, որ այն դեպքում, երբ

հնարավոր չի լինի թարգմանության ապահովումը, իրազեկման գործընթացը հապաղի, երբ ժամանակը կարևոր է, և կյանքերը ռիսկի տակ են:

Կալիֆորնիայի նահանգային նորմատիվ ակտերի ժողովածուի §8594.16-ով սահմանված է, որ հանրությանը տրվող արտակարգ իրավիճակների մասին ծանուցումները արտակարգ իրավիճակի ազդեցության տարածք հանդիսացող ցանկացած վարչաշրջանում կամ շրջաններում պետք է թարգմանվեն անգլերենից բացի ամենահաճախ խոսվող երկու լեզուներով:

Գրավոր հաղորդագրությունը սովորաբար ավելի պաշտոնական է, քան բանավորը: Հետևաբար, անգլերենից բացի այլ լեզուներով հաղորդակցվելիս պետք է հաշվի առնել որոշակի նկատառումներ: Օրինակ՝ թարգմանչական ծառայություններից օգտվելիս նախընտրելի է պայմանագիր կնքել տեղի թարգմանիչների հետ: Կան աշխարհի լեզուներով բազմաթիվ բանավոր և գրավոր թարգմանչական ծառայություն մատուցողներ:

Օրինապահ գերատեսչությունները պետք է նախքան որևէ աղետ լինելը պարզեն աշխարհի տարբեր լեզուներով լեզվական ծառայություններ մատուցողներին և պայմանագիր կնքեն նրանց հետ ծառայություններ մատուցելու համար՝ իրադարձությունների ժամանակ պատեհաժամ և արդյունավետ կերպով հաղորդակցություն ապահովելու համար: Լեզվական ծառայությունների մատուցման պայմանագրերը պետք է 24/7 ձևաչափով հասանելի լինեն՝ կայուն իրավիճակում և ճգնաժամի ժամանակ հաղորդակցության ցանկացած բաց արագ, արդյունավետորեն և ջանադրաբար վերացնելու համար:

Օրինապահ գերատեսչությունները պետք է տեղյակ լինեն, որ գրավոր անգլերեն և թիրախային լեզուները տարբեր ձևով են ներկայացնում, ինչը պայմանավորված է կոնկրետ հասկացությունների գրավոր ձևակերպմամբ: Ստորև ներկայացնենք օրինակները.

- մեծատառերի կիրառումը վերնագրերում,
- մեծատառերի կիրառումը առհասարակ (լեզուները տարբեր քերականական կանոններ ունեն),
- որոշ կետադրական նշաններ, որ տարբեր կիրառություն ունեն (ստորակետ, գիծ և այլն),
- աղբյուր տեքստում եղանակային պայմաններին արվող հղումները (օրինակ՝ «Անցյալ ամռանը գործակալությունը....» դատողության մեջ պետք է հաշվի առնել, որ տարբեր մշակույթներում «summer» բառը տարբեր կերպ է հնչում,
- Գործակալությունների անվանումները, այդ թվում և հապավումները, պետք է մնան չթարգմանված և ըստ անհրաժեշտության ներառեն տրամադրվող ծառայության նկարագիրը,
- Որոշ դեպքերում չկա համարժեք տերմին: Այս դեպքում հարկավոր է տրամադրել օրիգինալ անվանումը և համապատասխան համարժեքը տալ փակագծերում:

# General Rules

Jurisdictions are encouraged to establish a message library with sample messages that have been translated into the languages most commonly used in the communities that they serve. Pre-planned messages can save time in a disaster and ensure accurate translations exist for messages that are critical for the community.

For this determination of translated emergency notifications and prescript templates, the following apply:

- Do not translate names of agencies, programs, or proper names

- Do not translate locations, streets, cities, counties, etc.
- Do not translate signage, or acronyms
- Do not translate names of cooling/warming centers, evacuation shelters, distribution or dispensary locations, or names
- Do not translate web addresses, email addresses, or hyperlinks
- Avoid slang, jargon, or metaphors

Applying concepts found in this Language Style Guidelines will help to enable all Californians to have lifesaving information in a language or format that is accessible and understandable to them.

## Ընդհանուր կանոններ

Օրինապահ գերատեսչություններին խրախուսվում է ստեղծել հաղորդագրությունների շտեմարան՝ այն լեզուներով թարգմանված շաբլոնային հաղորդագրություններով, որոնք առավել հաճախ օգտագործվում են իրենց սպասարկած համայնքներում: Նախապես պլանավորված հաղորդագրությունները կարող են ժամանակ խնայել աղետի դեպքում և ճշգրիտ թարգմանություն ապահովել համայնքի համար կարևոր հաղորդագրությունների պարագայում:

Արտակարգ իրավիճակների վերաբերյալ թարգմանված ծանուցումների և նախասահմանված ձևանմուշների հարցի այս լուծման համար անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ ցուցումներով.

- չեն թարգմանվում գործակալությունների, ծրագրերի կամ հատուկ անունները,
- չեն թարգմանվում տեղանքի, փողոցների, քաղաքների, վարչաշրջանների և այլ անվանումները,
- չեն թարգմանվում նշանները և հապավումները,
- չեն թարգմանվում հովացման/ջեռուցման կենտրոնների, տարհանման ապաստարանների, բաշխիչ կամ բժշկական ամբուլատոր կենտրոնների անվանումները,
- չեն թարգմանվում ինտերնետային կայքէջերը, էլ. փոստի հասցեները կամ հիպերհղումները,
- անհրաժեշտ է խուսափել սլենգից, ժարգոնային կամ փոխաբերական արտահայտություններից:

## Glossary of Standards Emergency Notification Terms and Abbreviations (English)

## Արտակարգ իրավիճակների ժամանակ իրազեկման ստանդարտ տերմինների ու հապավումների բառարան (Հայերեն)

**Access and Functional Needs (AFN)**: As defined in Government Code section 8593.3, access and functional needs refers to individuals who have developmental, intellectual, or physical disabilities; chronic conditions or injuries; limited English proficiency or non-English speaking; Or, individuals who are older adults, children, or pregnant; living in institutional settings; low- income, homeless, and/or transportation disadvantaged; or from diverse cultures.

**Access and Functional Needs (AFN, Հասանելիություն և ֆունկցիոնալ կարիքներ)**. Ինչպես սահմանված է Կառավարության օրենսգրքի 8593.3 բաժնում, հասանելիություն և ֆունկցիոնալ կարիքներ ասելով՝ մենք ի նկատի ունենք այն անհատներին, ովքեր ունեն զարգացման, մտավոր կամ ֆիզիկական հաշմանդամություն, քրոնիկ հիվանդություններ կամ վնասվածքներ, անգլերենի սահմանափակ իմացություն կամ ընդհանրապես չեն տիրապետում անգլերենին, կամ անհատներին, որոնք տարեց հասակի են, երեխաներ են կամ հղիներ. Ապրում են հաստատություններում, ունեն ցածր եկամուտ, անօթևան են և (կամ) զրկված են տեղափոխման հնարավորությունից, կամ տարբեր մշակույթներից են:

**Advisory:** Highlights special conditions that are less serious than a warning, shelter in place, or evacuation. They are for events that may cause significant inconvenience, and if caution is not exercised, it could lead to situations that may threaten life and/or property.

**Advisory (Նախազգուշական ծանուցում)**. Շեշտադրում է իրավիճակի այնպիսի պայմանները, որոնք պակաս լուրջ են, քան նախազգուշացումը, տեղում ապաստանում պատսպարումը կամ տարհանումը: Դրանք նախատեսված են այնպիսի իրադարձությունների համար, որոնք կարող են զգալի անհարմարություններ պատճառել, և եթե զգուշություն չցուցաբերեն, դա կարող է հանգեցնել կյանքին և (կամ) գույքին սպառնացող իրավիճակների:

**Agency Representative:** A person assigned by a primary, assisting, or cooperating federal, state, territorial, tribal, or local government agency or private entity that has been delegated authority to make decisions affecting that agencies or organization’s participation in incident management activities following appropriate consultation with the leadership of that agency.

**Agency Representative (Գործակալության ներկայացուցիչ)**. Անձ, որը նշանակված է առաջնային, օժանդակ կամ համագործակցող դաշնային, նահանգային, տարածքային, ցեղային կամ տեղական գործադիր մարմնի գործակալության կամ մասնավոր կազմակերպության կողմից, լիազորված է կայացնելու որոշումներ, որոնք կազդեն միջադեպերի կառավարման գործողություններին գործակալության ղեկավարության հետ համապատասխան խորհրդարկումից հետո այդ գործակալությունների կամ կազմակերպության մասնակցության վրա:

**Agency:** A division of government with a specific function offering a particular kind of assistance. In the Incident Command System (ICS), agencies are defined either as jurisdictional (having statutory responsibility for incident management) or as assisting or cooperating (providing resources or other assistance).

**Agency (Գործակալություն)**. Կառավարության ստորաբաժանում, որն իրականացնում է կոնկրետ տեսակի օգնություն հատկացնող հատուկ գործառույթ: Արտակարգ իրավիճակների կառավարման համակարգում (ICS) գործակալությունները սահմանվում են կամ որպես օրինապահ (իրավիճակների կառավարման համար օրենքով պատասխանատվություն կրող) կամ որպես օժանդակող կամ համագործակցող (ռեսուրսներ կամ այլ օգնություն տրամադրող):

**Alert**: A communication intended to attract attention and warn of a danger or threat.

**Alert (Տագնապ)**. Հաղորդակցություն, որը նախատեսված է ուշադրություն գրավելու և վտանգի կամ սպառնալիքի մասին նախազգուշացնելու համար:

**Alerting Authority**: Public officials that are granted the authority to alert the public of emergency situations through Federal, State, and local laws. These are designated in a local Federal Communication Commission (FCC) Emergency Alert System (EAS) plan, and within a signed Federal Emergency Management Agency (FEMA) Memorandum of Understanding (MOU).

**Alerting Authority (Ահազանգող մարմին)**. Պետական պաշտոնյաներ, որոնց տրված է դաշնային, նահանգային և տեղական օրենքների միջոցով հանրությանը ահազանգել արտակարգ իրավիճակների մասին: Այդ օրենքները սահմանված են տեղական Հաղորդակցության դաշնային հանձնաժողովի (FCC) Արտակարգ իրավիճակների ահազանգման համակարգի (EAS) պլանում և վավերացված Արտակարգ իրավիճակների կառավարման դաշնային գործակալության (FEMA) Փոխըմբռնման հուշագրում (MOU):

**Alerting Originator**: Alerting Originators are designated individuals who have been designated the authority and have the training to draft and distribute the alert and warning message through the approved notification systems.

**Alerting Originator (Տագնապի ազդարարող).** Նախանշանակված անձինք, որոնք լիազորված են և անցել են տագնապի և նախազգուշացման հաղորդագրությունը մշակելու և իրազեկման հաստատված համակարգերի միջոցով տարածելու կարողությունների իրականացման վերապատրաստում:

**Alert Origination Tool**: Alert origination tools are software products used by emergency managers, public safety officials, and other alerting authorities to create and send critical lifesaving messages to the public or to other emergency management officials for collaboration.

**Alert Origination Tool (Տագնապի ազդարարման գործիք)**. Տագնապի ազդարարման գործիքները ծրագրային միջոցներ են, որոնք օգտագործվում են արտակարգ իրավիճակների կառավարիչների, հանրային անվտանգության ապահովման պաշտոնյաների և տագնապի ազդարարման պատասխանատու այլ մարմինների կողմից՝ կազմելու և ուղարկելու կարևոր կենսափրկարար հաղորդագրություններ հանրությանը կամ արտակարգ իրավիճակների կառավարման այլ պաշտոնյաներին՝ նրանց հետ համագործակցության նպատակով:

**AMBER Alert:** The AMBER Alert Program is a voluntary partnership between law- enforcement agencies, broadcasters, transportation agencies, and the wireless industry, to activate an urgent bulletin in the most serious child-abduction cases. AMBER alerts are one of the three categories of Wireless Emergency Alerts (WEA).

**AMBER Alert (AMBER տագնապ)**. AMBER տագնապի ծրագիրը կամավոր համագործակցություն է իրավապահ մարմինների, հեռարձակողների, տրանսպորտային գործակալությունների և անլար հաղորդակցության ոլորտի ընկերությունների միջև՝ երեխաների առևանգման ամենալուրջ դեպքերի համար հրատապ տեղեկագիր կազմելու համար: AMBER տագնապի ահազանգերը Արտակարգ իրավիճակների անլար կապով իրագործվող ահազանգերի (WEA) երեք կատեգորիաներից մեկն են:

**American Red Cross:** The American Red Cross, a humanitarian organization led by volunteers and guided by its Congressional Charter and the Fundamental Principles of the International Red Cross Movement, will provide relief to victims of disaster and help people prevent, prepare for, and respond to emergencies.

**American Red Cross (Ամերիկյան Կարմիր Խաչ)**. Ամերիկյան Կարմիր Խաչը մարդասիրական կազմակերպություն է, որը ղեկավարվում է կամավորների կողմից և առաջնորդվում է իր Կոնգրեսի կանոնադրությամբ և Կարմիր խաչի միջազգային շարժման հիմնարար սկզբունքներով: Այն օգնություն է տրամադրում աղետից տուժածներին և օգնում մարդկանց կանխել, պատրաստվել և արձագանքել արտակարգ իրավիճակներին:

**Authority**: The power or right to give orders and/or to make decisions. Authority may be delegated from one entity to another.

**Authority (Իրավասություն)**. Հրամաններ տալու և (կամ) որոշումներ կայացնելու լիազորություն կամ իրավունք: Իրավասությունը կարող է փոխանցվել մի մարմնից մյուսին:

**Civil Danger Warning (CDW):** A warning of an event that presents a danger to a significant civilian population. The CDW, which usually warns of a specific hazard and gives specific protective action, has a higher priority than the Local Area Emergency (LAE) (e.g. contaminated water supply, terrorist attack). Public protective actions could include evacuation, shelter in place, or other actions (such as boiling contaminated water or seeking medical treatment).

**Civil Danger Warning (CDW, Նախազգուշացում քաղաքացիներին վտանգի մասին).** նախազգուշացում որևէ իրադարձության մասին, որը վտանգ է ներկայացնում զգալի թվով քաղաքացիական բնակչության համար: Վտանգի մասին այս նախազգուշացումը, որը սովորաբար զգուշացնում է կոնկրետ վտանգի մասին և տալիս է կոնկրետ պաշտպանիչ միջոցառումներ, ավելի առաջնահերթ կարևորություն ունի, քան Տեղական մասշտաբի արտակարգ իրավիճակը (LAE) (օրինակ՝ աղտոտված ջրամատակարարում, ահաբեկչական հարձակում): Հասարակության պաշտպանիչ գործողությունները կարող են ներառել տարհանումը, տեղում ապաստանով ապահովումը կամ այլ գործողություններ (օրինակ՝ աղտոտված ջուր եռացնելը կամ բուժօգնություն ստանալը):

**Civil Emergency Message (CEM):** An emergency message regarding an in-progress or imminent significant threat(s) to public safety and/or property. The CEM is a higher priority message than the Local Area Emergency (LAE), but the hazard is less specific than the Civil Danger Warning (CDW).

**Civil Emergency Message (CEM, Քաղաքացիական արտակարգ իրավիճակների մասին հաղորդագրություն).** Արտակարգ հաղորդագրություն հանրային անվտանգության և (կամ) գույքի նկատմամբ տվյալ պահին գոյություն ունեցող կամ մոտալուտ էական սպառնալիք(ների) վերաբերյալ: CEM-ն ավելի առաջնահերթ հաղորդագրություն է, քան Տեղական մասշտաբի արտակարգ իրավիճակը (LAE), սակայն վտանգը նվազ սպեցիֆիկ է, քան Նախազգուշացում քաղաքացիներին վտանգի մասին (CDW):

**Common Terminology:** Normally used words and phrases—avoiding the use of different words/phrases for same concepts – to ensure consistency and to allow diverse incident management and support organizations to work together across a wide variety of incident management functions and hazard scenarios.

**Common Terminology (Ընդհանուր տերմինաբանություն).** Սովորաբար օգտագործվող բառերն ու արտահայտությունները, ընդսմին պետք է խուսափել նույն հասկացությունների համար տարբեր բառերի և (կամ) արտահայտությունների օգտագործումից, որոնց օգտագործման նպատակն է ապահովել հետևողականությունը և հնարավորություն տալ, որ տարբեր միջադեպերի կառավարման և աջակցման կազմակերպությունները կարողանան

համագործակցել տարաբնույթ իրավիճակների կառավարման գործառույթների և վտանգի սցենարների դեպքում:

**Communications/Dispatch Center**: Agency or interagency dispatch centers, 911 call centers, emergency control or command dispatch centers, or any naming convention given to the facility and staff that handles emergency calls from the public and communication with emergency management/response personnel.

**Communications/Dispatch Center (Հաղորդակցման/դիսպետչերական կենտրոն)**. Գործակալական կամ միջգերատեսչական դիսպետչերական կենտրոններ, 911 զանգերի կենտրոններ, արտակարգ իրավիճակների վերահսկման կամ ղեկավարման դիսպետչերական կենտրոններ կամ համաձայնեցված անվանումով հաստատություններ, որոնց անձնակազմը զբաղվում է հանրության կողմից արվող շտապ կանչերով և արտակարգ իրավիճակների կառավարման (արձագանքման) անձնակազմի հետ հաղորդակցությամբ:

**Complex Fire:** Two or more individual incidents located in the same general area which are assigned to a single incident commander or unified command.

**Complex Fire (Համալիր հրդեհ).** Երկու կամ ավելի անհատական միջադեպեր՝ տեղակայված միևնույն ընդհանուր տարածքում, որը նախանշանակված է մեկ միջադեպի լուծման հարցերով ղեկավարին կամ գտնվում է միասնական հրամանատարության ներքո:

**Cooling Center(s):** Facilities that are made available by public, private, and volunteer organizations as a heat relief station. There is no agreement that these facilities will be exempt from power outages.

**Cooling Center(s) (Հովացման կենտրոն(ներ))** են կոչվում այն շինությունները, որոնք տրամադրվում են պետական, մասնավոր և կամավորական կազմակերպությունների կողմից՝ որպես ջերմակարգավորման կայան: Չկա որև պայմանավորվածություն այն հարցի վերաբերյալ, որ այդ օբյեկտները զերծ կմնան հոսանքազրկումից:

**Disaster:** The occurrence or imminent threat of widespread or severe damage, injury, or loss of life or property, or significant adverse impact on the environment, resulting from any natural or technological hazards, or a terrorist act, including but not limited to fire, flood, earthquake, wind, storm, hazardous substance incident, water contamination requiring emergency action to avert danger or damage, epidemic, air contamination, blight, drought, infestation, explosion, civil disturbance, or hostile military or paramilitary action.

**Disaster (Աղետ).** Համատարած կամ ծանր վնասի, վնասվածքի կամ կյանքի կամ գույքի կորստի պատճառումը, կամ շրջակա միջավայրի վրա զգալի վնասակար ազդեցության գործումը կամ դրանց անմիջական սպառնալիքը, որ պայմանավորված են որևէ բնական կամ տեխնոլոգիական վտանգով, կամ ահաբեկչական գործողությամբ, այդ թվում ներառյալ հրդեհով, ջրհեղեղով, երկրաշարժով, քամիներով, փոթորկով, վտանգավոր նյութի հետ կապված միջադեպով, ջրի աղտոտմամբ, ինչը պահանջում է անհապաղ գործողություններ՝ վտանգը կամ վնասը, համաճարակը, օդի աղտոտվածությունը, անբերքատվությունը, երաշտը, վարակվածությունը, պայթյունը, քաղաքացիական անկարգությունները կամ թշնամական ռազմական կամ կիսառազմական գործողություն կանխելու համար:

**Emergency:** A suddenly occurring and often unforeseen situation which is determined by the Governor to require state response or mitigation actions to immediately supplement local government in protecting

lives and property, to provide for public health and safety, or to avert or lessen the threat of a disaster. Local government's adaptation of this definition connotes an event that threatens or actually does inflict damage to people or property, exceeds the daily routine type of response, and still can be dealt with using local internal and mutual aid resources.

**Emergency (Արտակարգ իրավիճակ).** Հանկարծակի առաջացող և հաճախ չնախատեսված իրավիճակ, որը սահմանում է Նահանգապետը՝ պետական արձագանք կամ վնասակար ազդեցության հետևանքների վերացման գործողություններ պահանջելու համար, որպեսզի անհապաղ օժանդակեն տեղական ինքնակառավարման մարմիններին՝ մարդկային կյանքերի և գույքի պաշտպանության, հանրային առողջության և անվտանգության ապահովման հարցերում, կամ աղետի սպառնալիքը կանխելու կամ նվազեցնելու նպատակով: Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից այս սահմանման մեկնաբանումը ենթադրում է մի իրադարձություն, որը սպառնում կամ իրականում վնաս է հասցնում մարդկանց կամ գույքին, գերազանցում է արձագանքման ամենօրյա ռեժիմին և, այդուհանդերձ, կարող է իրականացվել տեղի ներքին և փոխադարձ օգնության ռեսուրսների միջոցով:

**Emergency Assistance**: Assistance which may be made available under an emergency declaration. In general, Federal support to State and local efforts to save lives, protect property and public health and safety, and lessen or avert the threat of a catastrophe.

**Emergency Assistance (Արտակարգ օգնություն)**. Օգնություն, որը կարող է հասանելի լինել արտակարգ իրավիճակի հայտարարման ժամանակ: Ընդհանուր առմամբ, այն դաշնային աջակցությունն է նահանգային և տեղական ինքնակառավարման մարմինների ջանքերին՝ կյանքեր փրկելու, գույքը և հանրային առողջությունն ու անվտանգությունը պաշտպանելու և աղետի վտանգը նվազեցնելու կամ կանխելու համար:

**Emergency Operations Center (EOC):** The physical location at which the coordination of information and resources to support incident management (on-scene operations) activities normally takes place. An EOC may be a temporary facility or may be located in a more central or permanently established facility, perhaps at a higher level of organization within a jurisdiction. EOCs may be organized by major functional disciplines (e.g., fire, law enforcement, medical services), by jurisdiction (e.g., Federal, State, regional, tribal, city, county), or some combination thereof.

**Emergency Operations Center (EOC, Արտակարգ իրավիճակների օպերատիվ կենտրոն).** Ֆիզիկական վայրը, որտեղ սովորաբար տեղի է ունենում միջադեպերի կառավարման գործողություններին (պատահարների բուն օջախում իրականացվող օպերացիաներ) աջակցելու նպատակով տեղեկույթի և ռեսուրսների համակարգումը: Արտակարգ իրավիճակների օպերատիվ կենտրոնը կարող է լինել ժամանակավոր կազմավորված հաստատություն կամ կարող է տեղակայվել ավելի կենտրոնական կամ մշտապես գործող հաստատությունում, թերևս ավելի բարձր մակարդակի իրավասություններով օժտված կազմակերպության շրջանակներում: Այս կենտրոնները կարող են կազմակերպվել ըստ հիմնական ֆունկցիոնալ ճյուղերի (օրինակ՝ հրդեհ, իրավապահ մարմիններ, բժշկական ծառայություններ), ըստ իրավասության մակարդակի (օրինակ՝ դաշնային, նահանգային, տարածաշրջանային, ցեղային, քաղաքային, վարչաշրջանային) կամ դրանց որոշ միավորմամբ:

**Exercise:** An exercise is an instrument to train for, assess, practice, and improve performance in prevention, protection, mitigation, response, and recovery capabilities in a risk-free environment. Exercises can be used for testing and validating policies, plans , procedures, training, equipment, and

interagency agreements; clarifying and training personnel in roles and responsibilities; improving interagency coordination and communications; improving individual performance; identifying gaps in resources; and identifying opportunities for improvement.

**Exercise (Վարժանքներ).** Վարժանքը կիրառվում է որպես գործիք՝ ռիսկերից զերծ միջավայրում մարզվելու, գնահատելու, կիրառելու և բարելավելու կատարողական հնարավորությունները կանխարգելման, պաշտպանության, հետևանքների վերացման, արձագանքման և վերականգնողական օպերացիաների իրականացման գործում: Վարժանքները կարող են օգտագործվել քաղաքականության, պլանների, ընթացակարգերի, վերապատրաստման, սարքավորումների և միջգերատեսչական համաձայնագրերի փորձարկման և վավերացման, անձնակազմի դերերի և պարտականությունների հստակեցում և ուսումնավարժեցման, միջգերատեսչական համակարգման և հաղորդակցության բարելավման, անհատական կատարողական հնարավորությունների կատարելագործման, ռեսուրսների առկայության և հասանելիության բացերի հայտնաբերման, ինչպես նաև կատարելագործման հնարավորությունների բացահայտման նպատակով:

**Evacuation** – The action of evacuating a person or a place.

**Evacuation (Տարհանում)** – Մարդու կամ վայրի տարհանման գործողություն:

**Freeze:** A freeze is when the surface air temperature is expected to be 32°F or below over a widespread area for a climatologically significant period of time.

**Freeze (Սառեցում).** Այն երևույթն է, երբ լայնատարած տեղանքում կլիմայական նշանակալի ժամանակահատվածում գետնի մակերեսին օդի ջերմաստիճանը ակնկալվում է 32°F կամ ցածր:

**First Responders:** Refers to individuals who in the early stages of an incident are responsible for the protection and preservation of life, property, evidence, and the environment, including emergency response providers as defined in Section 2 of the Homeland Security Act of 2002 (6 U.S.C. 101). It includes emergency management, public health, clinical care, public works, and other skilled support personnel (e.g., equipment operators) who provide immediate support services during prevention, response, and recovery operations.

**First Responders (Օպերատիվ արձագանքման ծառայություններ).** Այս տերմինը վերաբերում է այն անձանց, որոնք միջադեպի վաղ փուլերում պատասխանատու են կյանքի, գույքի, ապացույցների և շրջակա միջավայրի պաշտպանության և պահպանման համար: Այդ կարգախմբում են ներառվում նաև արտակարգ իրավիճակների արձագանքման ծառայություններ մատուցողները, ինչպես սահմանված է 2002 թվականի Ազգային անվտանգության մասին օրենքի 2-րդ բաժնում (6 U.S.C. 101): Այն ներառում է արտակարգ իրավիճակների կառավարում, հանրային առողջապահությունը, բժշկական ծառայությունների տրամադրումը, հասարակական աշխատանքները և այլ հմտություններով օժտված աջակցող անձնակազմը (օրինակ՝ սարքավորումների օպերատորներ), որոնք անմիջական աջակցության ծառայություններ են մատուցում կանխարգելման, արձագանքման և վերականգնողական օպերացիաների ընթացքում:

**Flood:** An overflowing of a large amount of water beyond its normal confines, especially over what is normally dry land.

**Flood (Ջրհեղեղ).** Մեծ քանակությամբ ջրի վարարում իր բնականոն սահմաններից դուրս, հատկապես սովորաբար չոր հողային մակերևույթի վրա:

**Hazard:** Something that is potentially dangerous or harmful, often the root cause of an unwanted outcome.

**Hazard (Վտանգ).** Պոտենցիալ վտանգավոր կամ վնասակար բան, հաճախ անցանկալի արդյունքի հիմնական պատճառը:

**Hazard Probability:** The estimated likelihood that a hazard will occur in a particular area.

**Hazard Probability (Վտանգի հավանականություն).** Որոշակի տարածքում վտանգի առաջացման հաշվարկված հավանականությունը:

**Hazard Risk:** A quantitative product of the probability of a hazard occurring and the projected consequence of the impact.

**Hazard Risk (Վտանգի ռիսկ).** Վտանգի առաջացման հավանականության և ազդեցության կանխատեսվող հետևանքների քանակական արդյունքը:

**Hurricane:** A storm with a violent wind; a wind of force 12 on the Beaufort scale (equal to or exceeding 64 knots or 74 miles per hour)

**Hurricane (Փոթորիկ).** Սաստիկ քամիով ուղեկցվող մրրիկ. Բոֆորտի սանդղակի 12 ուժգնության քամի (որը հավասար է կամ գերազանցում է ժամում 64 հանգույցը կամ 74 մղոնը):

**Imminent Threat Alert:** “Imminent Threat” is one of the three categories of Wireless Emergency Alerts. Imminent Threat alerts must meet specific criteria for urgency, severity and certainty.

**Imminent Threat Alert (Անմիջական սպառնալիքի տագնապ)**. «Անմիջական սպառնալիքը» Արտակարգ իրավիճակների անլար կապով իրագործվող ահազանգերի (WEA) երեք կատեգորիաներից մեկն են: Անմիջական սպառնալիքի մասին տագնապի ահազանգերը պետք է համապատասխանեն հրատապության, ուժգնության և հստակության հատուկ չափանիշներին:

**Incident Command System (ICS):** A standardized on-scene emergency management construct specifically designed to provide for the adoption of an integrated organizational structure that reflects the complexity and demands of single or multiple incidents, without being hindered by jurisdictional boundaries. ICS is the combination of facilities, equipment, personnel, procedures, and communications operating within a common organizational structure, designed to aid in the management of resources during incidents. It is used for all kinds of emergencies and is applicable to small as well as large and complex incidents. ICS is used by various jurisdictions and functional agencies, both public and private, to organize field-level incident management operations.

**Incident Command System (ICS, Արտակարգ պատահարների կառավարման համակարգ).** Պատահարի վայրում արտակարգ իրավիճակների կառավարման ստանդարտացված մոդել՝ հատուկ մշակված ինտեգրված կազմակերպվածքի ընդունումն ապահովելու համար, որն արտացոլում է մեկ կամ մի քանի պատահարների բարդությունն ու պահանջները՝ առանց սահմանափակված լինելու իրավական խոչընդոտներով: Արտակարգ պատահարների կառավարման համակարգը շինությունների, սարքավորումների, անձնակազմի, ընթացակարգերի և հաղորդակցությունների համակցություն է, որոնք գործում են ընդհանուր կազմակերպվածքում, և նախատեսված են պատահարների ժամանակ օժանդակելու ռեսուրսների կառավարմանը: Այն օգտագործվում է բոլոր տեսակի արտակարգ իրավիճակների համար և կիրառելի է ինչպես փոքր,

այնպես էլ խոշոր և բարդ պատահարների դեպքում: Համակարգն օգտագործվում է տարբեր թե պետական, թե մասնավոր օրինապահ և ֆունկցիոնալ գործակալությունների կողմից՝ պատահարների կառավարման օպերացիաները տեղային մակարդակով կազմակերպելու համար:

**Integrated Public Alert and Warning System (IPAWS**): In the event of a national emergency, the President will be able to use IPAWS to send a message to the American people quickly and simultaneously through multiple communications pathways. IPAWS is available to United States Federal, State, local, territorial and tribal government officials as a way to alert the public via the Emergency Alert System, Wireless Emergency Alerts (WEA), NOAA Weather Radio and other National Weather Service dissemination channels, the internet, existing unique warning systems, and emerging distribution technologies.

**Integrated Public Alert and Warning System (IPAWS, Հանրային ահազանգման և նախազգուշացման ինտեգրված համակարգ).** Ազգային արտակարգ իրավիճակի դեպքում նախագահը կկարողանա IPAWS համակարգի միջոցով ամերիկացի ժողովրդին ուղերձ հղել արագ և միաժամանակ բազմաթիվ կապուղիներով: Հանրային ահազանգման և նախազգուշացման համակարգը հասանելի է Միացյալ Նահանգների կառավարության դաշնային, նահանգային, տեղական, տարածքային և ցեղային պաշտոնյաներին՝ որպես հանրությանը ահազանգելու միջոց Արտակարգ իրավիճակների ահազանգման համակարգի, Արտակարգ իրավիճակների՝ անլար կապով իրագործվող ահազանգերի (WEA) միջոցով, Օվկիանոսների և մթնոլորտային հետազոտությունների ազգային վարչության Եղանակային ռադիոկանխատեսումների և այլ եղանակային ռադիոծառայությունների մատուցման ալիքներով, ինտերնետի միջոցով, գոյություն ունեցող եզակի նախազգուշացման համակարգերով և տեղեկույթի սփռման նորագույն տեխնոլոգիաներով:

**Jurisdiction:** A range or sphere of authority. Public agencies have jurisdiction at an incident related to their legal responsibilities and authority for incident mitigation.

Jurisdictional authority at an incident can be political or geographical (e.g., city, county, state or federal boundary lines) or functional (e.g., police department, health department).

**Jurisdiction (Իրավասություն).** Լիազորությունների շրջանակ կամ ոլորտ: Պետական գործակալություններն օժտված են պատահարների հետ կապված գործողություններ ձեռնարկելու որոշակի իրավասություններով, որոնք առնչվում են արտակարգ պատահարների նկատմամբ իրենց իրավական պատասխանատվությանը և արտակարգ պատահարների հետևանքների մեղմացմանը: Արտակարգ պատահարի դեպքում գործելու իրավազորությունը կարող է պայմանավորված լինել քաղաքական կամ աշխարհագրական հիմնավորմամբ (օրինակ՝ քաղաք, շրջան, նահանգային կամ դաշնային սահմաններ) կամ գործառական (օրինակ՝ ոստիկանության բաժին, առողջապահության վարչություն):

**Jurisdictional Agency:** The agency having jurisdiction and responsibility for a specific geographical area, or a mandated function.

**Jurisdictional Agency (Իրավազոր գործակալություն)**: Գործակալություն, որն օժտված է որոշակի աշխարհագրական տարածքի կամ լիազորված գործառույթի համար իրավազորությամբ և պատասխանատվությամբ:

**Law Enforcement Warning (LEW):** A warning of a bomb explosion, riot, or other criminal event (e.g. a jailbreak). An authorized law enforcement agency may blockade roads, waterways, or facilities, evacuate or deny access to affected areas, and arrest violators or suspicious persons.

**Law Enforcement Warning (LEW, Իրավապահ մարմինների կողմից նախազգուշացում).** Նախազգուշացում ռումբի պայթյունի, խռովության կամ այլ քրեական միջադեպի (օրինակ՝ փախուստ բանտից): Իրավապահ լիազոր մարմինը կարող է շրջափակել ճանապարհները, ջրային ուղիները կամ օբյեկտները, տարհանել կամ արգելել մուտքը պատահարի ազդեցության գոտում գտնվող տարածքներ և ձերբակալել օրինախախտներին կամ կասկածելի անձանց:

**Local Area Emergency (LAE):** An emergency message that defines an event that, by itself, does not pose a significant threat to public safety and/or property. However, the event could escalate, contribute to other more serious events, or disrupt critical public safety services. Instructions, other than public protective actions, may be provided by authorized officials. Examples include a disruption in water, electric or natural gas service, or a potential terrorist threat where the public is asked to remain alert.

**Local Area Emergency (LAE, Տեղական մասշտաբի արտակարգ իրավիճակ)**. Արտակարգ իրավիճակի իրազեկման մասին հաղորդագրություն, որով սահմանվում է այն միջադեպը, որն ինքնին էական վտանգ չի ներկայացնում հանրային անվտանգության և (կամ) գույքի համար: Միջադեպը, սակայն, կարող է սրվել, նպաստել այլ՝ ավելի լուրջ միջադեպերի կամ խաթարել հանրային անվտանգության կարևոր ծառայությունների աշխատանքը: Լիազոր պաշտոնյաները կարող են հանրային պաշտպանությանն ուղղված գործողություններից զատ նաև հրահանգներ տալ: Որպես օրինակ՝ կարելի է նշել ջրամատակարարման, էլեկտրականության կամ բնական գազի մատակարարման խափանումը կամ հնարավոր ահաբեկչական սպառնալիքը, որի առկայության դեպքում հանրությանը խնդրում են զգոն լինել:

**Local Government:** Public entities responsible for the security and welfare of a designated area as established by law. A county, municipality, city, town, township, local public authority, special district, intrastate district, council of governments (regardless of whether the council of governments is incorporated as a nonprofit corporation under State law), regional or interstate government entity, or agency or instrumentality of a local government; an Indian tribe or authorized tribal entity, or in Alaska a Native village or Alaska Regional Native Corporation; a rural community, unincorporated town or village, or other public entity.

**Local Government (Տեղական ինքնակառավարման մարմիններ).** Օրենքով սահմանված կարգով նախանշանակված տարածքի անվտանգության և բարեկեցության համար պատասխանատու պետական մարմիններ: Վարչաշրջան, համայնքային իշխանություն, քաղաք, ավան, թաղամաս, տեղական հանրային իշխանություն, հատուկ շրջան, ներպետական շրջան, կառավարությունների խորհուրդ (անկախ նրանից, թե կառավարությունների խորհուրդը նահանգային օրենսդրությամբ ընդգրկված է որպես շահույթ չհետապնդող կորպորացիա), տարածաշրջանային կամ միջնահանգային կառավարման մարմին, կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ հաստատություն, հնդկացիական ցեղ կամ լիազորված ցեղային մարմին, կամ Ալյասկայում բնիկ գյուղ կամ Ալյասկայի տարածաշրջանային բնիկ կորպորացիա, գյուղական համայնք, չգրանցված քաղաք կամ գյուղ կամ այլ պետական մարմին:

**Major Disaster:** As defined under the Robert T. Stafford Disaster Relief and Emergency Assistance Act (42 U.S.C. 5122), a major disaster is any natural catastrophe (including any hurricane, tornado, storm, high water, wind-driven water, tidal wave, tsunami, earthquake, volcanic eruption, landslide, mudslide,

snowstorm, or drought), or, regardless of cause, any fire, flood, or explosion, in any part of the United States, which in the determination of the President causes damage of sufficient severity and magnitude to warrant major disaster assistance under this Act to supplement the efforts and available resources of States, tribes, local governments, and disaster relief organizations in alleviating the damage, loss, hardship, or suffering caused thereby.

**Major Disaster (Տարերային աղետ**). Համաձայն Ռոբերտ Ստեֆորդի Տարերային աղետների և արտակարգ իրավիճակների ժամանակ ցուցաբերվող օգնության մասին օրենքի (42 U.S.C. 5122)՝ տարերային աղետ է համարվում ցանկացած բնական արհավիրք (այդ թվում՝ ցանկացած մրրիկ, տորնադո, փոթորիկ, հեղեղում, ալեկոծությունից բարձրացած ջրի մակարդակ, մակընթացության ալիք, ցունամի, երկրաշարժ, հրաբխի ժայթքում, սողանք, սելավ, ձնաբուք կամ երաշտ), կամ, անկախ պատճառներից, ցանկացած հրդեհ, ջրհեղեղ կամ պայթյուն, որ կարող են տեղի ունենալ Միացյալ Նահանգների ցանկացած մասում, որը Նախագահի որոշմամբ բավականաչափ վնաս կպատճառի ծանրությամբ ու մեծությամբ, որպեսզի թույլատրի իրականացնել տարերային աղետների ժամանակ ցուցաբերվող օգնություն՝ սույն Ակտի համաձայն՝ օժանդակելու նահանգային, ցեղային, տեղական ինքնակառավարման մարմինների, և աղետների հետևանքների վերացման հարցերով զբաղվող կազմակերպությունների ջանքերին ու լրացնելու առկա ռեսուրսները՝ վնասների, կորուստների, դժվարությունների հետևանքները կամ, համապատասխանաբար, դրանց պատճառած տառապանքները մեղմելու համար:

**Major Disaster Declaration (Federal):** A declaration by the President of the United States based upon criteria and authority described in the Robert T. Stafford Disaster Relief and Emergency Assistance Act, as amended. The Presidential declaration of a major disaster is warranted when a hazard impact “causes damage of sufficient severity and magnitude to warrant Federal disaster assistance to supplement the efforts and available resources of States, local governments, and the disaster relief organizations in alleviating the damage,loss, hardship, or suffering.” Funding comes from the President's Disaster Relief Fund, which is managed by FEMA, and the disaster aid programs of other participating Federal departments and agencies. A Presidential major disaster declaration triggers long-term Federal recovery programs, some of which are matched by State programs, and designed to help disaster victims, businesses, and public entities.

**Major Disaster Declaration (Federal) (Տարերային աղետների հռչակագիր (Դաշնային)).** Միացյալ Նահանգների Նախագահի արած հայտարարություն, որը հիմնված է Ռոբերտ Ստեֆորդի Տարերային աղետների և արտակարգ իրավիճակների ժամանակ ցուցաբերվող օգնության մասին լրամշակված օրենքի չափորոշիչների և լիազորությունների վրա: Տարերային աղետի վերաբերյալ Նախագահի հայտարարությունը թույլատրված է, երբ վտանգի ազդեցությունը «առաջացնում է բավականաչափ ծանրության և մեծության վնաս, որով կհիմնավորվի աղետների ժամանակ ցուցաբերվող օգնություն՝ սույն Ակտի համաձայն՝ օժանդակելու նահանգային, ցեղային, տեղական ինքնակառավարման մարմինների, և աղետների հետևանքների վերացման հարցերով զբաղվող կազմակերպությունների ջանքերին ու լրացնելու առկա ռեսուրսները՝ վնասների, կորուստների, դժվարությունների հետևանքները կամ, համապատասխանաբար, դրանց պատճառած տառապանքները մեղմելու համար»: Ֆինանսավորումը ստացվում է Աղետների հետևանքների վերացման հարցում օգնության Նախագահի հիմնադրամից, որը կառավարվում է Արտակարգ իրավիճակների կառավարման դաշնային գործակալության կողմից, և այլ ընդգրկվող դաշնային գերատեսչությունների և գործակալությունների՝ աղետների օգնության ծրագրերից: Տարերային աղետի վերաբերյալ Նախագահի հայտարարությամբ գործարկվում են վերականգնման երկարաժամկետ դաշնային

ծրագրեր, որոնցից մի քանիսը համընկնում են պետական ծրագրերի հետ և նախատեսված են աղետից տուժածներին, ձեռնարկություններին և հանրային մարմիններին օգնելու համար:

**Memorandum of Understanding (MOU):** An agreement document between two or more parties outlined in a formal document. It is not legally binding but signals the willingness of the parties to move forward with a contract laying out the guidelines under which each party will operate.

**Memorandum of Understanding (MOU, Փոխըմբռնման հուշագիր).** Պայմանագրային փաստաթուղթ երկու կամ ավելի կողմերի միջև, որը նկարագրված է պաշտոնական փաստաթղթի տեսքով: Այն իրավաբանորեն պարտավորեցնող չէ, սակայն ազդարարում է կողմերի պատրաստակամությունը՝ հետագայում պայմանագիր կնքելու պարտադրանքով: Փոխըմբռնման հուշագրով սահմանվում են այն ուղենիշները, որոնց համաձայն պետք է գործի յուրաքանչյուր կողմ:

**Mitigation:** The capabilities necessary to reduce loss of life and property by lessening the impact of disasters.

**Mitigation (Հետևանքների մեղմացում).** Կյանքի և գույքի կորուստները նվազեցնելու համար անհրաժեշտ կարողություններ՝ նվազեցնելով աղետների ազդեցությունը:

**Mutual-Aid Agreement:** Written agreement between agencies and/or jurisdictions that they will assist one another upon request, by furnishing personnel, equipment, and/or expertise in a specified manner.

**Mutual-Aid Agreement (Փոխօգնության համաձայնագիր)**. Գործակալությունների և (կամ) օրինապահ մարմինների միջև գրավոր համաձայնություն, որ նրանք կաջակցեն միմյանց խնդրանքով՝ տրամադրելով անձնակազմ, սարքավորումներ և (կամ) փորձաքննություն կոնկրետ ձևով:

**National Warning System (NAWAS):** A communication system of the federal government which provides warning to the population of an attack or other national emergency.

Reception is at local and state warning points.

**National Warning System (NAWAS, Նախազգուշացման ազգային համակարգ).** Դաշնային կառավարության հաղորդակցման համակարգ, որով իրականացվում է բնակչության նախազգուշացումը հարձակման կամ այլ ազգային արտակարգ իրավիճակների մասին:

Տեղեկույթի ստացումը տեղի է ունենում նախազգուշացման տեղական և նահանգային կետերում:

**National Weather Services (NWS):** Federal government agencies charged with weather related reporting and projections.

**National Weather Services (NWS, Եղանակային կանխատեսումների ազգային ծառայություններ).** Կառավարական դաշնային գործակալություններ, որոնք պատասխանատու են եղանակի վերաբերյալ հաշվետվությունների և կանխատեսումների համար:

**NOAA Weather Radio:** "The voice of the National Weather Service" - NOAA Weather Radio broadcasts National Weather Service warnings, watches, forecasts and other hazard information 24 hours a day. It is provided as a public service by NOAA. The NOAA Weather Radio network has more than 480 stations in the 50 states and near adjacent coastal waters, Puerto Rico, the U.S. Virgin Islands and U.S. Pacific Territories.

**NOAA Weather Radio (NOAA, Եղանակային կանխատեսումների մասին ռադիոազդարարում).** «Ազգային եղանակային ծառայության ձայնը» - NOAA Եղանակային կանխատեսումների ռադիոն հեռարձակում է Ազգային եղանակային ծառայության նախազգուշացումները, դիտումները, կանխատեսումները և այլ վտանգի մասին ցանկացած այլ տեղեկություն 24 ժամ ռեալ ժամանակի ռեժիմում: Այն տրամադրվում է որպես հանրային ծառայություն NOAA-ի կողմից: NOAA Եղանակային ռադիո ցանցն ունի ավելի քան 480 կայան 50 նահանգներում և հարակից ափամերձ ջրերի մոտ, Պուերտո Ռիկոյում, ԱՄՆ Վիրջինյան կղզիներում և ԱՄՆ Խաղաղօվկիանոսյան տարածքներում:

**NOAA Radio's Specific Area Message Encoding (SAME):** provides in a digital format specific, timely information on the nature and location of a threat to the safety of those most immediately at risk from severe weather or other hazards. Its greatest value is to significantly improve the automatic selection and distribution of messages about events that threaten people and/or property.

**NOAA Radio's Specific Area Message Encoding (SAME, NOAA Տարածքում ռադիոհաղորդագրությունների կոնկրետ կոդավորման համակարգ).** Թվային ձևաչափով տրամադրվում են հատուկ, պատեհաժամ տեղեկություններ այն մարդկանց անվտանգությանը սպառնացող վտանգի բնույթի և գտնվելու վայրի մասին, ովքեր անմիջականորեն վտանգի տակ են գտնվում եղանակային ծանր պայմանների կամ այլ վտանգների պատճառով: Դրա ամենամեծ նշանակությունը մարդկանց և (կամ) գույքին սպառնացող իրադարձությունների վերաբերյալ հաղորդագրությունների ավտոմատ ընտրությունն ու բաշխումն էականորեն կատարելագործելն է:

**Non-Weather Emergency Message (NWEM)**: NWEM refers to emergency messages for the public about hazardous events that are originated by government organizations other than the National Weather Service, but still utilize NWS alert dissemination services.

**Non-Weather Emergency Message (NWEM, Ոչ եղանակային արտակարգ իրավիճակների մասին հաղորդագրություն).** Ոչ եղանակային արտակարգ իրավիճակների մասին հաղորդագրությունը վերաբերում է հանրության համար արտակարգ իրավիճակի մասին հաղորդագրություններին, որոնք իրազեկում են վտանգավոր իրադարձությունների մասին, ուղարկվել են Եղանակային կանխատեսումների ազգային ծառայությունից բացի պետական այլ կազմակերպությունների կողմից, սակայն դեռ օգտագործում են Ազգային օդերևութաբանական ծառայության (NWS) տագնապի ահազանգերի տարածման ծառայությունները:

**Operational Area:** the county and its sub-divisions with responsibility to manage and/or coordinate information, resources, and priorities among local governments and serve as the link between the local government level and the regional level.

**Operational Area (Օպերացիաների շրջան)**. Այն վարչաշրջանը և նրա վարչական բաժանումները, որոնք պատասխանատու են տեղական ինքնակառավարման մարմինների միջև տեղեկատվության, ռեսուրսների և առաջնահերթությունների կառավարման և (կամ) համակարգման հարցում, և ծառայում են որպես տեղական ինքնակառավարման և տարածաշրջանային կառավարման մարմինների միջև կապող օղակ:

**Planned Event:** A scheduled nonemergency activity (e.g., sporting event, concert, parade, etc.).

**Planned Event (Պլանավորված իրադարձություն).** Ժամանակացույցով պլանավորված ոչ արտակարգ իրավիճակի իրադարձության (օր.՝ սպորտային, համերգային, շքերթային և՛):

**Point of Dispensing (POD):** A designated area to distribute medications and vaccinations and provide risk communication and public information during a public health emergency. A Point of Dispensing may be a “closed” POD operated by a hospital to distribute medications to their patients and staff or an “open” POD used to distribute medications to the general public. A Point of Distribution may also be a centralized location where the public obtains life-sustaining commodities following a disaster, including shelf stable food and water.

**Point of Dispensing (POD, Դեղորայքի թողարկման կետ)**. Արտակարգ իրավիճակների ժամանակ դեղորայքով ապահովման և պատվաստումների իրականացման, ինչպես նաև սպառնացող ռիսկերի մասին իրազեկման և հանրային տեղեկատվության տրամադրման համար նախանշանակված տարածք: Թողարկման կետը կարող է լինել «փակ», որը գործում է հիվանդանոցի կողմից՝ իրենց հիվանդներին և անձնակազմին դեղեր բաժանելու համար, կամ «բաց», որն օգտագործվում է ընդհանուր հանրությանը դեղեր բաժանելու համար: Բաշխման կետը կարող է նաև լինել կենտրոնացված վայր, որտեղ աղետից հետո հանրությանը կարող են տրամադրել կենսապահովման համար անհրաժեշտ ապրանքներ, այդ թվում և՝ երկարաժամկետ պահպանվող սնունդ և ջուր:

**Point of Distribution (POD):** A designated area to distribute medications and vaccinations and provide risk communication and public information during a public health emergency. A Point of Distribution may also be a centralized location where the public obtains life- sustaining commodities following a disaster, including shelf stable food and water.

**Point of Distribution (POD, Առաքման կետ)**. Հանրային արտակարգ իրավիճակների ժամանակ դեղորայքի առաքման և պատվաստումների իրականացման և ինչպես նաև սպառնացող ռիսկերի մասին իրազեկման և հանրային տեղեկատվության տրամադրման համար նախանշանակված տարածք: Առաքման կետը կարող է նաև լինել կենտրոնացված վայր, որտեղ հանրությունը աղետից հետո ձեռք է բերում կենսապահովման համար անհրաժեշտ ապրանքներ, այդ թվում՝ երկարաժամկետ պահպանվող սնունդ և ջուր:

**Presidential Alert:** A Presidential Alert is one of the three categories of Wireless Emergency Alert (WEA) messages that is reserved for use of the President of the United States in the event of a national emergency.

**Presidential Alert (Նախագահական տագնապ).** Նախագահական ահազանգը Արտակարգ իրավիճակների ժամանակ անլար կապուղիներով տրվող տագնապի ահազանգերի (WEA) հաղորդագրությունների երեք կատեգորիաներից մեկն է, որը տալու իրավունքը վերապահված է ազգային արտակարգ իրավիճակների դեպքում Միացյալ Նահանգների նախագահին:

**Public Information:** Processes, procedures, and systems for communicating timely, accurate, accessible information on the incident's cause, size, and current situation; resources committed; and other matters of general interest to the public, responders, and additional stakeholders (both directly affected and indirectly affected).

**Public Information (Հանրային տեղեկատվություն)**. Պատահարի պատճառի, մասշտաբների և ընթացիկ իրավիճակի վերաբերյալ ժամանակին, ճշգրիտ, մատչելի տեղեկույթի փոխանցման

գործընթացներ, ընթացակարգեր և համակարգեր, հատկացված ռեսուրսներ, և հանրությանը, արագ արձագանքման ծառայությունների ներկայացուցիչներին և բոլոր շահագրգիռ կողմերին (ինչպես անմիջականորեն, այնպես էլ անուղղակիորեն պատահարի ազդեցության տակ գտնվող) տրամադրվող ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

**Public Safety Power Shutoff (PSPS):** A preventative measure of last resort if an electric utility reasonably believes that there is an imminent and significant risk that strong winds may topple power lines or cause major vegetation-related issues leading to increased risk of fire.

**Public Safety Power Shutoff (PSPS, Հանրային անվտանգության ապահովման նպատակով էլեկտրաէներգիայի անջատում).** Կանխարգելիչ վերջին միջոցը, որին դիմում են այն դեպքում, երբ էլեկտրակայանը ողջամտորեն համարում է, որ կա անմիջական և էական վտանգ, թե ուժեղ քամուց կարող են տապալվել էլեկտրահաղորդման գծերը կամ առաջացնել բուսականության հետ կապված լուրջ խնդիրներ՝ հանգեցնելով հրդեհի վտանգի սպառնալիքի ավելացման:

**Situational Awareness:** Is the ability to identify, process, and comprehend the essential information about an incident to inform the decision making process in a continuous and timely cycle and includes the ability to interpret and act upon this information.

**Situational Awareness (Իրավիճակային իրազեկվածություն)**. Պատահարի վերաբերյալ կարևոր տեղեկույթը որոշարկելու, մշակելու և ընկալելու կարողությունն է՝ որոշումների կայացման գործընթացը շարունակական և ժամանակին տեղեկույթով ապահովելու համար և ներառում է այդ տեղեկույթը մեկնաբանելու և դրա հիման վրա գործելու կարողությունը:

**Shelter in place:** Take immediate shelter where you are—at home, work, school, or wherever you can take protective cover. It may also mean "seal the room"; in other words, take steps to prevent outside air from coming in.

**Shelter in place (Ապաստանով ապահովում տեղում).** Անմիջապես պատսպարվեք ապաստանում այնտեղ, որտեղ գտնվում եք՝ տանը, աշխատավայրում, դպրոցում կամ ցանկացած տեղում, ուր կարող եք ծածկապաշտպանության տակ լինել: Դա կարող է նշանակել նաև «կողպել սենյակը», այլ կերպ ասած՝ քայլեր ձեռնարկել՝ կանխելու դրսից օդի ներթափանցումը:

**Severe Weather Potential Statement:** This statement is designed to alert the public and state/local agencies to the potential for severe weather up to 24 hours in advance. It is issued by the local National Weather Service office. This could be used to make citizens aware of non-weather situation.

**Severe Weather Potential Statement (Հավանական խստաշունչ եղանակի մասին հայտարարություն)**. Այս հայտարարությունը արվում է հանրությանը և նահանգային/տեղական ինքնակառավարման մարմիններին ահազանգելու խստաշունչ եղանակային իրավիճակի մասին մինչև 24 ժամ առաջ: Հայտարարությունն արվում է Օդերևութաբանական կանխատեսման ազգային ծառայության գրասենյակի կողմից: Այն կարող է օգտագործվել քաղաքացիներին ոչ եղանակային հանգամանքներով պայմանավորված իրավիճակի մասին իրազեկելու համար:

**Severe Weather Statement:** A National Weather Service product which provides follow up information on severe conditions which have occurred or are currently occurring. Could use a Statement for evacuation or shelter-in-place updates.

**Severe Weather Statement (Խստաշունչ եղանակի մասին հայտարարություն).** Օդերևութաբանական կանխատեսման ազգային ծառայության գրասենյակի արած հայտարարություն, որով հետագա տեղեկություններ են տալիս արդեն ձևավորված կամ դեռ ձևավորվող եղանակային սաստիկ պայմանների վերաբերյալ: Կարող է օգտագործել տարհանման կամ տեղում ապաստանով ապահովման վերաբերյալ հայտարարության թարմացումների համար:

**Threat:** Natural or manmade occurrence, individual, entity, or action that has or indicates the potential to harm life, information, operations, the environment, and/or property.

**Threat (Սպառնալիք)**. Բնական կամ տեխնածին երևույթ, անհատ, սուբյեկտ կամ գործողություն, որն ունի կամ ցույց է տալիս կյանքին, տեղեկույթին, օպերացիաներին, շրջակա միջավայրին և (կամ) գույքին վնաս հասցնելու հավանականություն:

**Warming Centers:** - a short-term emergency shelter that operates when temperatures or a combination of precipitation, wind chill, wind and temperature become dangerously inclement.

**Warming Centers (Ջեռուցման կենտրոններ).** Կարճաժամկետ կերպով տրամադրվող արտակարգ իրավիճակի ապաստարան, որը գործում է այն դեպքում, երբ ջերմաստիճանը կամ տեղումների, քամուց գերսառեցման, քամու և ջերմաստիճանի համակցությունը դառնում է վտանգավոր:

**Warning:** Communication intended to persuade members of the public to take one or more protective actions in order to reduce losses or harm.

**Warning (Զգուշացում)**. Հաղորդակցություն, որի նպատակն է համոզել հասարակության անդամներին/հանրությանը ձեռնարկել մեկ կամ մի քանի պաշտպանիչ գործողություններ՝ կորուստները կամ վնասը նվազեցնելու համար:

**Wildfire:** A large, destructive fire that spreads quickly over woodland or brush.

**Wildfire (Անտառային հրդեհ).** Մեծ, կործանարար հրդեհ, որն արագորեն տարածվում է անտառում կամ թփուտներում:

**Wireless Emergency Alert (WEA):** Wireless Emergency Alerts (WEA) were established pursuant to the Warning, Alert and Response Network (WARN) Act under Federal Communication Commission (FCC) rules. Alerting authorities can broadcast WEAs to cellular carrier customers with compatible mobile devices located in the geographic vicinity of cellular towers serving an affected area.

**Wireless Emergency Alert (WEA, Արտակարգ իրավիճակների ժամանակ անլար կապուղիներով տրվող տագնապի ահազանգերի համակարգ).** Արտակարգ իրավիճակների ժամանակ անլար ահազանգման ազդանշանները ստեղծվել են Նախազգուշացման, ահազանգման և արձագանքման ցանցի (WARN) մասին օրենքով՝ Հաղորդակցության դաշնային հանձնաժողովի (FCC) կանոնների համաձայն: Ահազանգող մարմինները կարող են հեռարձակել անլար կապուղիներով տրվող տագնապի ահազանգեր բջջային օպերատորի հաճախորդներին համատեղելի շարժական սարքերով, որոնք տեղակայված են լինում պատահարից տուժած տարածքը սպասարկող բջջային օպերատորների աշտարակների մերձակայքում:

**Volcano:** A mountain or hill having a crater or vent through which lava, rocks fragments, hot vapor, and gas are being or have been erupted from the earth’s crust.

**Volcano (Հրաբուխ)**. Լեռ կամ բլուր, որն ունի խառնարան կամ օդանցք, որի միջով երկրի ընդերքից ժայթքում կամ ժայթքել են լավա, ժայռերի բեկորներ, տաք գոլորշիներ և գազեր են: